

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Տր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Անկերկայի համար	
Տարեկան	3 սրյ.
Վեցամսեայ	1.50 »
ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մանուցման տոյր առաջին երեսին համար 40 սակարկէ կ. իսկ վերջին երեսի համար 20 սակարկէ կ. երկրորդ տեղի սակարկեալ համար 20 Օլոյ գինը կըլլայ:

Վառանջի համար ձեռքի 10 սակարկէ

ՇԱՐՔԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔԻՆ ՕՐԵՐԸ

(Austria) R. P. Kaleschakian
Mechtharistengasse W. 4
Vienna

Նամակ եւ դրամ դրկեյ
Խմբագրութեան հասցեի

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
L'action du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կրթութեան նախարարութեան

Արտասահմանի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԵՆ ԵՐԱՇ-
ԽԱՌՐԵԱՆ, ՍՕՅԻՍ. ԲՍՂԱԲԻ ՎԻՃԱ-
ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տօմսակ գնել փոփոգողները կրնան
իրեն դիմել:

Չար-Պորիս փողոց Վառան
4-5

ՓՈՒՆԵԼ ՊԵՏԲ Է

Թաւրէժի Ալլա. վարժարանին
անօրէն, Տ. Ռաշմաճեան, քըն-
նութեանց ու թուանշաններու
փաստներուն վրայ ընդարձակ
ուսումնասիրութեամբ մը կրկին
հրատարակային փիլոսոփայութեան
նիւթ կը դարձնէ խնդիր մը
որուն այնքան սխալակներ նուի-
րած է Պուլկարահայ մամուլը:

Առանց ծանրանալու այդ փաս-
տներուն վրայ, զորս Տ. Ռաշմաճ-
եան ձեռնհասօրէն շեշտած է իր
յօդուածին մէջ, կուզեմ աւելցնել
օգտուել քանի մը դիտողութիւն-
ներ ընելու համար վարժարան-
ներու մէջ գործադրուած պատ-
ժի ու վարձատրութեան յոռի
գրութեան մասին առ հասարակ:

Առանց պատժի, առանց վար-
ձատրութեան. միթէ կարելի է
աշակերտները դասել և բան սոր-
վեցնել անոնց: Պատժի ու վար-
ձատրութեան պաշտօններին հետ
հաշտուող ամէն դաստիարակի
համար տարօրինակ պիտի երե-
ւայ դրութեան մը՝ ուրկէ յան-
կարձ դարձէ ի վեր տիրապե-
տող կարգապահութեան ու զար-
գացումի այդ երկու վիթխարի
սիւները կը նետուին, անպէտ
ու անօգուտ գործերու պէս, պատ-
ուելիներու փոշոտ ու սմայի
«արխիւր», պատուանդինն ու
ֆալստիանին հետ քով քովի:

Բայց հայ ուսուցիչները պէտք
է առնեն այդ քայլը. պէտք է
աշատեն սերունդները իրենց
մատաղ հասակէն սկսեալ բըռ-
նութեան ու սարսափի ուրուա-
կանէն հալածագիւն կամ «անբնա-

կան» վարձատրութեան մը ակն-
կալութեամբ հմայուած միայն
գործելու, զարգանալու հաւա-
սարապէս դատապարտելի կացու-
թեանէն:

Ի՞նչ արդիւնք կարելի է սպա-
սել աշխատութեան մը՝ որ պատ-
ժի կամ զրկումի վախէն և կամ
վարձատրութեան մը տենչէն
դրողուած է: Այն օրէն երբ այդ
վախը վերնայ կամ վարձատրու-
թեան յոյսը շնջուի, աշխատու-
թեան եռանդն ալ պիտի մարի:
Ասիկա յաճախ փորձուած իրո-
շուծիւն մըն է, որուն դժբաղդ-
գոհները մէկէ աւելի կարելի է
հաշուել դպրոցականներու մէջ:
Մենք ամէն օր կը հանդիպինք
աշակերտներու որոնք հիւսիս
աշխատիլ կը սկսին միայն երբ
քննութիւնները մտանան, արիւն
քրտինք թափելով, գլուխ ճա-
թեցնելով, առաջը թիւննին
խանդարելով, և կամ այնպիսի-
ներ՝ որոնք դաս կը պատրաս-
տեն երբ հարցաքննուելու, թիւ
առնելու կարգը իրենց ելած ըլ-
լալը գիտեն: Ու որքան ատեն
վարձատրութեան կամ պատժի
սխալմամբիւր օր և է ձեռք մը կը
մնայ վարժարաններու մէջ, աշա-
կերտները միշտ այս կերպով
պիտի վերաբերուին իրենց դա-
սերուն: Ալ այնչափ հեռու ընթե-
թէ աշակերտը այդպէսով միայն
կարելի է աշխատութեան վար-
ժեցնել: Ընդհակառակը, անոնք
կը վարժուին «անբնական» վար-
ձատրութիւնները իբր անհրա-
ժեշտ հետեւանք նկատելու ի-
րենց աշխատութեան, և երբ օր
մը անոնք պակսին կամ ուրիշի
մը յասկացուին, այլեւս ինք-
զինքնին զրկուած, անիրաւուած
կը զգան, եռանդնին կը մարի,
նախանձ, ատելութիւն, արհա-
մարհանք ընկերներու մէջ կը
սկսի բոյն դնել, ու ալ այդ դա-
սարանը կորսուած է:

Գպրոցականները կարգապա-
հութեան վարժեցնելու և զար-
գացնելու համար, պէտք է նախ
անոնց մէջ գիտակցութեան ու
պարտաճանաչութեան զգացումը
զարգացնել: Պէտք է զանոնք
վարժեցնել աշխատելու ոչ թէ

այս կամ այն վարձատրութեան
յուսով, այս կամ այն պատժին
վախով, այլ որովհետեւ «իրենց
պարտականութիւն է այդպէս ը-
նելու»: Այդ պէտք է ըլլայ ուսու-
ցիչներու առաջին ջանքը, և ան-
կէ միայն կրնայ ծնիլ ուսուցիչ-
ներու և ուսանողներու մէջ սիրոյ
այն փոխադարձ կապը, առանց
որուն ամէն ջանք ապարդիւն կը
մնայ:

Ասոր համար սակայն, հարկ
պիտի ըլլայ յաճախ դատելէն
զոհել, ինչ որ արդի պայման-
ներուն մէջ անկարելի է. ուսու-
ցիչները ստիպուած են վազն ի
վազ տղաքը քաղցնել որոշ ծրա-
գրի մը նշանակած կէտին հաս-
ցնելու համար: Այդ պատճա-
ռաւ թուանշանի ու պատժի մէջ
կը ջանան ամփոփել ինչ որ ժա-
մերու զոհողութեան պէտք ունէր
հասկցուելու համար: Մենք նոյն
խակ գիտակցաբար ողուն բարո-
յական զարգացումը կը զոհենք
յիմար ձեւակերպութեան մը, և
միտքը կը խճոխենք մանրամաս-
նութիւններով՝ որոնք պատա-
պարտուած են, երկու օր ետքը,
անխուսափելի մոռացումին:

Պէտք է թէ ծրագրիւնները անօր-
րացնել և թէ՛ մանաւանդ հիմ-
նովին շնչել ներքին կարգապա-
հութեան աւանդական ձեւակեր-
պութիւնները:

Մենք աշակերտին մէջ պար-
տականութեան զգացումը զար-
գացնենք, և թո՛ղ խղճին մէջ
փնտռէ ան իր ընթացքին ճշ-
մարիա նուիրագործումը, փո-
խանակ դիմելու արտաքին վկա-
յութեանց զորս առանց սուղ ճի-
գերու կը մատակարարենք ի-
րեն:

Ու թաւրիղի Լիլաւա թաղին
ազգային վարժարանաց ուսուց-
չական խմբին նախաձեռնութիւ-
նը սկիզբը թո՛ղ ըլլայ այն յե-
ղաշրջման որուն պէտքը վաղուց
փորձեց զգալի ընել Պուլկարա-
հայ մամուլը:

ԼԵԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

—(—)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈՒԼՍ, 24 Յունուար

Այսույս 14ին տեղի ունեցաւ
այդ ազգերին բացումը և թուրք
կառավարութեան յանձնուիլը:
Հանդէսին կը նախագահէր Պա-
րոն Մարշալ—Գերման դեսպանը,
հետն առնելով Կիլոմի զրկած
մասնաւոր պատուիրակները և
Մօլթէ «դպրոց-նախ» նաւա-
պետը, Երկար ու ձիգ ճառեր
վիժուեցան Համիտի շնական
կեանքի երկարութիւն ցանկա-
ցան, մէկ մէկ բաժակ աղբիւ-
րի ջուրէն խմեցին Համիտի և
Կիլոմի կենացը: Բարեկամու-
թեան խօսքեր, մեղրածոր, ա-
նուշ բառեր, թուրքերու իշային
ջիղերը խտացնող «երկու բա-
րեկամ մեծ պետութիւններ»
(Գերմանիա և Թուրքիա) անմոռ-
թիւնը — ամէն ձեռով, դար-
ձուած քով, գոյնով ու հոտով կրկ-
նուեցան:

Կիլոմ, Կիլոմ — Սալէտտին
քիւրտին գերեզմանին վրայ տա-
պանաբար գնել տուիր, զքեզ
300,000,000 երեւակայական մահ-
մետականներու բարեկամ հրա-
տարակեցիր. ազտող ոտներով
մեծ Գալիլիացու շրջած տեղեքը
մտոռելէն ետքը, հոս Պոլիս ե-
կար, Համիտի դու եւս հայու
թաց ու տաք արիւնով ձեռքը
սեղմեցիր (կինդ ալ սեղմեց...):
հայու նահատակներու միտէն ու
արիւնէն եփած համիտի ճաշը
կերար. հայու արցունքէն ու
արիւնէն շինած ըմպելիները
«զօրլամիշ» ըրիր... Զգայուն
սրտացու մարգերու թուրք ու
մուրը առիւր գնացիր: Մնացեր էր
լոկ նամազ մը «խուռմիշ ընել»,
ան ալ Սուլթան Ահմէտի հրապա-
րակին վրայ ըրիր, մահմետա-
կաններու թլփատուած մասերը
լուանալու համար... կեցցե՛ս
քրիստոնեայդ կիլոմ, հաւատոյ
պաշտպան...:

Իսկ աս ամէն լկտի շեղօքոր-
թութեան հետ գերման տիպո-
մասին երբէք չի մոռնար Պաղ-
տատի գծին թոյլաւորութիւնը,

կարմիր ծովին մէջ ամուսնի կա-
յարան մը, առեւարական և
այլ մնաւորները...

Թուրք կառավարութիւնը եր-
կու թուական ունի, հիճրէթի
(որ այժմ 1316 կամ 1318էն է)
և ելեւմտական տարի որ քրիս-
տոնէից թուականն է, միայն
տարուայ սկիզբը կը հաշուի
մարտ 1էն:

Այս կարճ բացատրութիւնէ
եւքը՝ դառնանք հին երգին:
Ստակ չի կայ, Թուրքիան մաղա-
գործ պետութիւն է. ստակ կը
մանկէ: Բայց Պեռլինի, Լոնտո-
րայի, Բարիլի և եւրոպական
ստակի կեդրոններու պանքա-
ներու դռները դոյ գտաւ Հա-
միտ—այդ գերագոյն մալա գոր-
ծը—իր առաջ: Ամէնքը մեծեցին
ստակ տալ, Թուրքիոյ վճարման
վարկը մեծած է ընդմիջտ, թէեւ
Պատէն Տ'Ալլօշ իր ոսկիով գրած
«Թուրքիան և օթոմանները» շնա-
կան գրքին մէջ (1894 Բարիլի
տպած—գաղիէրէն), կըսէ որ
Թուրքիոյ «քրէտին» շնորհիւ
Համիտի Աստուածային կառավա-
րութեան խիստ բարձրացած է,
և այն ինչ միւս պետութիւնները
7 0/0 փոխառութիւն կընեն,
Թուրքիան 4 0/0 և աւելի վար
փոխառութիւն ունին ամէն
տեղ...

Համիտի ճարը կտրեցաւ:
Դուրսէն յոյս չի մնաց, գիմեց
ներսը, իր բոշա երկրի ա-
նօթի ներսը. ներսն ալ ամէնքը
անօթի էին, նորէն դիմեց ներ-
սը եղած գուրսեցի վաշխառու-
ներուն, Թուրքիոյ արիւնը ծծող
տղրուկ հանրային պարտքին և
Պանք Օթոմանին: Կըսուի թէ
հանրային պարտքը 80 և Պանք
Օթոմանին 50 հազար թրքական
ոսկի վճարեր են, վերսպահելով
ատոր փոխարէն նոր առաջարկ-

ներ ընելով զանազան տնտեսա-
կան ասպարէզներ իրենց ձեռքն
առնելու իրաւունքը:

Բայց այդ ամէնը կընէ լոկ
130,000 ոսկի, կաթիլ մը՝ չարիք-
ներու ովկիանոսներու մէջ: Ու
առեր է այսօր Համիտ բահն ու
ու փետարը (քանդելու գործիք),
ընկեր է իր հպատակներու և իր
մէջ եղած օտար վաճառա-
կաններու վրայ, կը քանդէ:
Դեռ երկու ամբողջ ամիս և 15
օր կայ մարտ մէկին երբ պէտք
է մաղազաներու, ընկերութիւն-
ներու և էսնաֆ դասակարգին
թէսքէրէները նորոգուին, բայց
կառավարութեան բոշա պաշտօն-
եաները արդէն սկսեր են աղա-
չել օտարներուն հրամայել ի-
րենց հպատակներուն՝ որ այժմ
աւնեն հետեւեալ տարի թէս-
քէրէները, որովհետեւ ստակ է
պէտք...

Տեսա՞ք ինչ տարիի ենք հա-
սեր...

Իսկ այս ամէնուն քով Համիտի
նշանակած ելեւմտական խոր-
հուրդ կոչուած քոմիսիօնը ժողով
ժողովի ետեւէ կը կազմէ, խելա-
պատակը կը ճաթեցնէ, որ ստակի
նոր աղբիւր գտնէ—չէայ, ամէն
աղբիւր ցամքեր է:

Համիտ ալ եւրոպացիներու
աչքը փոշի փչելու համար իրա-
տէ մը հրապարակ կը հանէ,
որու մէջ «ոչ հրաման այլ խոր-
հուրդ կուտայ քոմիսիօնին—ո-
րովհետեւ ինքը պատական կայ-
սըր է (չու՛շ—չու՛շ. . .) ա-
տանկ է գրուած իրատէին մէջ),
որ ընդունին Գաղղիոյ մէջ գոր-
ծադրուող «ելեւմտական կեդրո-
նացման» ձեւը և ոչ ներկայ
ձեւը. որու մէջ ամէն վալի իր
վիլայէթներու եկամուտները կը
ծախսէ իր նահանգի պէտքե-
րու վրայ և միայն աւելորդ մնա-
ցածը կը զրկէ կեդրոնական պա-
րագ դանձարանը, Սուլթանը
խորհուրդ կուտայ, որ վիլայէ-

թի ամէն ծախքը թոյլտուութիւն
ստանայ կեդրոնէն:

Խորհուրդ... Թո՛ղ թէ Ալլա-
հը կը սիրես. Համիտ աղա կա-
տակ կընես, հոն քոմիսիօնի մէջը
դրեր ես երկար աւանակներ,
դեղում գլուխ մարդակերպ հայ-
վաններ և ետքէն խորհուրդ
կուտայ: Խորհուրդը մարդերուն
կուտան, իսկ աւանակներուն՝
գաւազանի հարուած: Այդ էչէրը
քու բերնէդ ելածը Աստուծոյ
պատգամի տեղ կընկունին և
յիմարութիւն յիմարութեան
վրայ կաւելցնեն, գլորելով
Թուրքիան սնանկութեան մէկ
անդունդէն միւս անդունդը: Թո՛ղ
միմտութիւնը, Համիտ աղա:

ԲԱԺ

Ֆիլիպի, 28 Յունուար

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԹՂԹԱԿՔԷՆ)

Ինչպէ՞ս որ նախորդ թղթակ-
ցութիւնովս հաղորդած էի, ամ-
սոյս 20ին, ինչպատ Հայաստանի
սովեալներուն ներկայացուցաւ
«Անիի առումը», երգեցիկ խում-
բին և էր համակիրներուն կողմէ:
Առաջին անգամ, երգեցիկ
խումբը առաջնորդութեամբ Պ.
Խ. Թ. Ի. քառաձայն երգեց «Թո՛ղ
կորնչին»ը, յետոյ ժողովուրդին
պահանջքին համաձայն երգեց
նաեւ «Բամբ որոտան»ը և «Մեր
հայրենիք»ը: Առաջին երկուքը
բունն ծափահարութիւններով
ընդունուեցան, միայն «Մեր
հայրենիք»ը առաջին անգամ
սկսուելուն անյաշող եղաւ, բայց
յետոյ կանոնաորոշեցաւ: Ասկէ
ետքը սկսաւ բուն թատերգու-
թիւնը: Երկար կըլլայ մանրա-
մասնօրէն ամէն դերակատարնե-
րուն վրայ ծանրանալ, սաչափը
միայն կարժէ յիշել որ ամէնքն
ալ, հակառակ ժողովուրդին մէկ
մասէն իրենց յաշտութիւնը
կասկածելի նկատուելուն՝ խաղը

սպասուածէն աւելի յաջող ելաւ,
և խումբին հոգատար մարմնոյն
չանքերը կոկիկ հասոյթով մը
պակուեցաւ: Հարկ կը համարիմ
հոս յիշատակել թէ՛ Զարուհիի
դերը ստանձնող օրիորդը, հա-
կառակ առաջին անգամ բեմը ե-
րեւնալուն, խիստ յաջողապէս
ներկայացաւ: Յստակ առողանու-
թիւն մը և վարժ ու համարձակ
չարժուածքներ աւելի հրապուրիչ
դարձուցին իր դերը:

Բուն խաղը լրանալէն յետոյ,
կրկին երգեցիկ խումբը երգեց
Մայր Հայաստանի ուղղուած «Եր-
կիր քաջապան»ը որ նոյնպէս
գնահատուեցաւ ժողովուրդէն,
ուրկէ ետքը ներկայացուցաւ ե-
րեք հատ կենդանի պատկերներ՝
որոնց սարքումը յաջող կերպով
կատարեց կիմնադիօնի գծադրու-
թեան գասատու Պ. Սթանչէֆ որ
մասնախումբին խնդրանք ստանձ-
նած էր այդ պաշտօնը:

Կենդանի պատկերներէն առա-
ջինը կը ներկայացնէր Մայր Հա-
յաստանը շղթայակապ, մերկա-
ցած իր բոյր փառքերէն, զոր
կատարեց Օրիորդ Պ... շատ
հմայիչ գիրքով: Երկրորդը կը
ներկայացնէր Պեռլինի դաշնա-
նադրութեան 61րդ յօդուածը ո-
րուն Մայր Հայաստան պաղատա-
գին կաղերսէր: Երկրորդին մէջ
արդէն հայ յեղափոխական կար-
միր դրօշը կը ծածանէր, որուն
չուրջը յեղափոխականներ կը
կռուէին, կղերին աղօթքին խառ-
նած իրենց հրացաններուն ձայ-
նը. իսկ 61րդ յօդուածը բաւա-
րարութիւն չի կրնալ տալուն և
երկրին մէջ ժողովրդին տառա-
պանքները հետզհետէ անտանե-
լի դառնալուն, Մայր Հայաստան
այլ եւս լքած էր զայն, և յե-
ղափոխութեան փարած էր: ո-
րուն դրօշը կը կրէր Զարուհիի
դերը կատարող Օրիորդը հայկա-
կան տարազով: Կենդանի պատ-
կերները ներկայացուած մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՀԱՐԿԱԻՈՐ Է
ԱՐԴԵՅԹ ԹԻԱՆՇԱՆ ՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

— — —
1

Մշակում լոյս տեսնող «Արձագանք-
ներ» վերնագրի տակ յօդուածներով
(Յ. Տ. ստորագրութեամբ) վերջերս
քննադատուեց ներսիսեան դպրոցի
ուղղութիւնը. դա առիթ տալով մի
բանակուի առաջ բերեց այն հարցը,
թէ արդեօք կարելի՞ է սուանց քա-
նչանի, առանց ֆինուրեան առաջ աս-
նի կրթական գործը Այս կարեւոր հար-
ցը թեթեւակի շօշափուեց ու քննեց-
սա մեր պարբերական թերթերի շա-
տերի սովորութիւնն է: Հետուն չգնա-
լու համար ստեմ այն, որ այս յօդ-

ուածը գրեթէ միեւնոյն բովանդակու-
թեամբ բանակուի ժամանակ (հոկ-
տեմբեր ամսին) ուղարկել էի Մշակին.
զուր յոյսեր. յօդուածը մինչեւ հիմա
էլ լոյս չտեսաւ. երեւի հարցը փակել
են, բայց տարբարադարար անորոշ ու
խակ վիճակի մէջ:

Թւանշան ու քննութիւն ոչնչա-
ցնելու խնդիրը ո՛չ միայն թարմ,
այլ այնքան սուր է, որ շատ օգտա-
կար եւ համարում այդ կողմերի հա-
մար նորից վերաբարձել այս խնդ-
րիցը բոլորովին ուրիշ փաստերով
անձնական ու մի ամբողջ ուսուցչա-
կան խմբի փորձառութեամբ:

Ո՛րքան յարմար ժամանակ. ֆսան-
կերոյ դարի սկզբում զբաղուել մի նոր
հարցով, ամեն կերպ աշխատել բա-
րեփոխել դպրոցները դրութիւնը, ո-
րոնցից կախած է ապագայ սերնդի
ամբողջ դաստիարակութիւնը, մեր
ապագայ յաղթութիւնը: Անցնենք
գործի:

Ներսիսեան դպրոցի առիթով ծա-

գած բանակուի մէջ իմ ուշադրու-
թիւնը առանձնապէս գրաւել է Մշակի
թիւ 184 ում լոյս տեսած նոյն դրպ-
րոցի տեսուչ Սամուէլ Բաղդասարի
հերքումը (ուղղութեամբ Արձագանք-
ներ» յօդուածի դէմ) հետեւեալը.

«Գալով այն հարցին, թէ մեր ու-
սուցիչները մեծամասնութիւնը թա-
նշանները եւ քննութիւնները ամե-
նահիմնաւոր միջոցն է համարում ա-
շակերտներին բան սովորեցնելու,
պէտք է ստեմ, որ այդ նկատողու-
թիւնը նոյնպէս սխալ է: Մեր դպրո-
ցում վարչութիւնը եւ մանկավարժու-
կան ժողովը սխալված են գործադրել
այդ միջոցները, որովհետեւ յիսուց
փոխարինող չաւ միջոցներ չեն չեն
գտնված: Մանկավարժական թեր-
թերն այժմ լցված են այդ միջոց-
ների պակասութիւններին վերա-
բերեալ յօդուածներով, սակայն ցա-
ւալին այն է, որ առ այժմ դեռ չեն
առաջարկվել այնպիսի բացիօնայ մի-
ջոցներ, որոնք կարողանային մեծ

դպրոցներում քննութիւնները եւ
թւանշանները փոխարինել: Դրանով
է բացատրվում, որ չնայած այդ մի-
ջոցների ակներեւ պակասութիւննե-
րին, դրանք առաջիմ գործ են դնվում
ամբողջ Ռուսաստանի միջնակարգ
դպրոցներում: Վերջինների հետ հա-
մեմատած, մեզ մօտ նոյնիսկ աւելի
մեղմ են գործ դնվում վերոյիշեալ
միջոցները: Օրինակ պիմնազիանե-
րում եւ թէլալկան դպրոցներում ա-
մեն մէկ առարկայից քննութիւն
(գրաւոր կամ բանաւոր) կատարվում
է դասարանում, մեզ մօտ ընդհակա-
ռակը կան շատ առարկաներ, որոն-
ցից աշակերտները քննութիւն են
տալիս միմիայն 5—8 տարի պարա-
պելուց յետոյ. այսինքն 5—8 տարի
այդ առարկաներից աշակերտները փո-
խադրվում են դասարանից դասարան
առանց քննութեան: Օրինակ, հայոց
եւ ուսուցչ լիզուներից աշակերտները
8 տարի շարունակ փոխադրվում են
դասարանից դասարան առանց քննու-

Ղոցին գիտելի էր հանդիսականներուն որ աստիճան յափշտակուիլը և անոնց դէմքին արտա-յայտութենէն գիտելի էր հաս-հասկնալ իրենց հոգեկան ուրա-խութիւնը: Պատկերներու միջո-ցին ալ անդադար ծափահարու-թիւններ եղան: Իսկ զինուորա-կան միւզիքը սկիզբէն մինչեւ վերջը ամէն ընդհատումներու ատեն ընտիր կտորներ կը նուա-գէր: Այս պատկերներէն ետքը կրկնուեցաւ «Թող կորնչին» և ներկայ եղող երկուսն հոծ բազ-մութիւնը մեկնեցաւ զոհ սրտով և անուշ տպաւորութեան մը տակ:

Երգեցիկ խումբի անդամները թող ներեն ինծի որ ի դիմաց իրենց հրապարակաւ շնորհակա-լութիւն յայտնեմ «Լէսէլ» խում-բի ազնիւ անդամներուն որոնք, սիրալոծար, խաղին համար պէտք եղած հագուստները տուին և թողարտեցին նոյն իսկ յար-գելի անդամներէն մէկուն՝ Պ. Գրիգոր Յակոբեանին, ներկա-յացման երեկոյին պէտք եղած գործողութիւններուն վրայ հըս-կելու:

Պ. Գրիգոր Յակոբեան իր օրի-նակելի հոգածութեամբ ու ներ-կայացման յաջող ըլլալուն հա-մար ըրած անխնայ ջանքերովը իսկապէս արժանի է յարգանքի, ու պատիւ կը բերէ թէ իրեն և թէ իր պատկանած խումբին:

ՅԻՍԷ

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍԱՆԻՅ (4)

ՌՈՒՍԱՍԱՆԻ ՏՍԶՎԱԶԱՅ
Կ Ա Ղ Ք Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Նոր գաղթական արհեստները բազմաճանաչ ընդունելի տէր եւ աշ-խատասէր մարդիկ են. առանց որ եւ է բարեգործական հիմնարկութեան գի-

մելու, ճար ճուր ըրին, կամաց կա-մաց տեղաւորուեցան քաղաքներու մէջ եւ հազիւ օրապահիկներ կը հա-նեն: Ասոնցմէ մեծ մաս մը ծախեց ամենավերջին իրեղենները ապրելու համար, գրամագլխի չգոյութիւնը եւ կեանքի թանկութիւնը վերջ ի վերջոյ ստիպեց անոնց վերադառ-նալ հայրենիք, նախամեծար համա-րելով թրքի արին տակ կոտորուիլ, քան կովկասի մէջ մուրացկան լի-նել:

Ամենամեծ զրկանքը կրեցին գաղ-թականներու տղաքը, որ հայոց ծխական դպրոցներու փակուելով, ընդ միշտ զրկուեցան տարրական ուսումէ: Մի քանիներ միայն Ներ-սիսեան դպրանոցը ընդունուեցան: Տաճկահայերը որ դպրոցի վրայ շատ թեթեւ աչքով կը նային եւ ուսման փող տալու մէջ անտանկի կերպով գծուծ են, կովկասի մէջ տեսան եւ հասկցան դպրոցի յարգը: Եւ գիտեմ ընտանիքներ, որ տղաքներն ուսումէ չի զրկելու համար վերադարձան եր-կիր:

Նոր ամուսնութիւնները սակաւ են արհեստներու մէջ եւ անուր անգոհացուցիչ: Եկատերիտար քա-ղաքը բնակող հին ու նոր գաղթա-կան 33 ընտանիքէն 7ը անդաւակ են, մնացածներն ալ հազիւ 55—60 երեխայ ունին վատառողջ կազմուած-քով: Անգաւակութիւնը եւ զուակ-ներու վատառողջութիւնը արդիւնք է երիտասարդներու անտակ կեան-քին: Չկայ երիտասարդ մը որ մէկ անգամ գոնէ վեներական ախտէ բրո-նուած չըլլայ ամուսնանալէ առաջ եւ քիչ չեն այնպիսիները, որ ամուս-նանալէ յետոյ դարձեալ կը յաճարեն անբարոյական վայրերը:

Փորձը ցոյց տուաւ որ Տաճկահա-յաստանի հոյակուած (սեռական) բա-րոյականութիւնը բոլորովին կեղծ է եղեր. հարեմական կարգերու եւ ոչ թէ փրակցութեան արդիւնք է գա-ւառացիներու ամուսնական մաքրու-թիւնը: Երբ որ տղամարդը ազատ երկիր կը մտնէ աւելի ցոփ ու ան-զուսպ կը դառնայ քան տեղացի սրի-կաները: Կիններն ալ սկանչներն դուրս կը հանեն «մեղա՛յ, սոյտեղ Ռուսաստան է» պատճառարանելով: Բանուորներու օրավայձերը շատ ինկած են վերջին տարիներո. օրա-կան երկու րուպլի շահողներ հազ-ուաքիւտ են, միջին օրականը 70

կոպէկէն աւելի չէ. մինչդեռ 8—10 տարի առաջ 2—3 րուպլի էր: Ան-ընդհատ կրկնուող գործապաւնները (բաթրօններու կողմէ) եւ անգործ-ներու մտքութիւնը բոլորովին ու-ժասպառ ըրած են բանուորներու ա-ռաւել յայն ալ ուժասպառ նիւ-թականը: Հայերու հետ կը մրցին ուսաները, վրացիները, ասորի-ները, լէզգիները, թուրքերը, քիւրտերը եւ այլն: Գործարանատէ-րերը ի հարկէ է այդ մրցութեան մէջ հրապարակին տէրն են եւ բանուոր-ներու օրականներու չափը անոնց բացարձակ քարեհաճութենէն կա-խում ունի: 1—2 հայ գործարանա-տէրեր միայն հայ բանուորներ կը վարձեն:

Չունին ոչ մէկ բանուորական կազ-մակերպութիւն: Տարիներ առաջ Ծովաններու Պաթուժի գործարա-նին մէջ բանուորական ֆօնտ մը հաստատուեցաւ Մ. Մարգարեանի ջանքերով: Բանուորներու օրակա-նէն 100ին երկու վար կը դրուէր ի պահեստ. այդ գումարով գործա-րանի մէջ կրցեր էին ունենալ ածա-նազին ճաշարան մը, դեղորայք եւ դեղագործ մը. կօզնէին նոյնպէս հի-ւանդացած ընկերներու: Դժբաղդա-բար հազիւ 4—5 տարի տեւեց այդ առաջին քայլը. հիմնադիրը վաղուց հեռացած էր. բանուորները բոլոր-ովին տղէտ մարդիկ լինելով, չկրցան իրենք իրենց կառավարուիլ եւ գործի ղեկավար հանդիսացան իրար յաջոր-դող անճարակ գործակատարներ:

Երեւան եկան զեղծութիւնը, խոտ-վութիւնները սկսան եւ զուր տեղը պիտի սպաննուէր գործակատարնե-րէն մին: Պահեստի գումարը յանձ-նեցին ընդհանուր կառավարիչ Սօ-ճաժիրեանցին, ֆօնտի գոյութիւնը վատնուած էր այդ վերջին քայլով. վրայ հասան անգործութեան երկար օրեր, բանուորները բաւական սպա-ռեցին ֆօնտը, իսկ մնացած 600 րուպլին չի նայած բանուորներու բողոքին, Սօճաժիրեանց յատկացուց Պաթուժի եկեղեցեայ շինութեան եւ գամբանական կուրիաց այդ համակ-րելի միութեան:

Սոսկելով Պաթուժի հայ գործարան-ներու մասին, մենք չենք կարող մասնանիչ չընել յայտնի բարեւար Մանթաշեանի գործարանի անկարգ դրութեան վրայ: Գործարանի ան-միջական կառավարութիւնը յանձ-

նուած է Կոստա անուն կինսոյի մը որ Մանթաշեանի enfant gatéն է, Տաճկահայերուն իրր իրր հայհոյել, բանուորները ծեծել, գործակատար-ները ապստակել այդ սրիկայի սովո-րական բաներն են: Քանի՛ քանի՛ անգամ գրասենեակի (քանթո) ին-տէլիգենտ կառավարիչները բողոքե-ր են այդ մարդու արարքներու դէմ, բայց միշտ գործարանատիրոջ ամե-նասիրելի ծառայող մնացեր է. եւ ինչո՞ւ չի մնայ, քանի՛ որ միշտ իր բաթրօնի շահերուն կը ծառայէ, տեղի անտեղի կտրելով օրականները կամ մի քանի համ աւելի բանեցնելով բանուորները: Եթէ արգար ձեռք մը ի մի հաւաքէր բանուորներէն խուճած օրականները, կարելի էր Բարիզի մէջ քանի մը հայ եկեղեցիներ կանգ-նել, ի պարծանս Լուսաւորչի թոռ-ներուն:

Թշուառ է մանաւանդ բանուորնե-րու գրութիւնը: Մութ ու թոնաւ գործարաններու եւ փոշեից հանքե-րու մէջ կսպառի իրենց ուժեղ ֆիզի-քականը, իսկ գուրսը, խաւար ու անբարոյական մթնոլորտի մէջ կա-պակտի իրենց բարոյականը. կաշ-խատին ու կաշխատին տարիներով, ձեռքերնին դրամ չի մնար, իսկ վրայ կուտան իրենց կեանքն ու առողջու-թիւնը: Ո՛չ մի լոյս չի թափանցեր անոնց ազտոտ խցիկները, քանի քանի անգամ ուղուեցաւ ընթերցա-րան-լսարաններ բանալ բանուորա-կան քաղաքներու մէջ, ուսաց կա-ռավարութիւնը միշտ մի քիչ տրուած խնդիրները. գաղանի մօտեմալ ա-նոնց եւ զարդացնել, այդ ալ անվաւա չէ խեղճ բանուորներուն. մի կաս-կած մը, զապարտութիւն մը բաւա-կան է նորանոր խուզարկութիւննե-րու եւ բանտարկութիւններու տեղի տալ. իսկ շատ անգամ գործարանա-տէրերը կասկածելի բանուորները չեն ընդունիր:

Այն երկիրներու մէջ, ուր խօսքի ու մամուլի ազատութիւն չկայ, այն երկիրներու մէջ, ուր մէկ ցեղը մաս-նաւորապէս կը հալածուի, անկարելի է սօցիալիստական կազմակերպու-թիւններ առաջ բերել, առանց բո-լորովին ջախջախուելու:

2—3 տարի առաջ թիֆլիզ խու-զարկութիւններ եղան ուսաներու եւ վրացիներու մէջ, սօցիալիստներ գահելու համար. ձեռքակալուածնե-րու ոչ ոքի մօտէն գտան որ եւ է կապ

թեան եւ միմիայն Յրդ տարւայ վերջը ենթարկուում են քննութեան:

Պարզ է, որ «Տ. Յ.» անգամից պա-հանջում է այնպիսի բաներ, որոնք նոյնիսկ «գիտութեան» մէջ դեռ լուծ-ված չեն»:

Հերքումից այս կտորը մէջ բերի, որովհետեւ թւանշանների ու քննու-թիւնների կուսակիցները մեծ մասով այդ տեսակ պէտք է պատճառաբա-նեն:

Ան այժմ մի կողմ թողնենք, թէ ինչո՞ւ ներսիսեան դպրոցի վարչու-թիւնն ու մանկավարժական ժողովը, գուցէ հէնց շատ դպրոցներ, ստիպ-ւած են գործադրել քննութիւնների ու թւանշանների սխտէմը. քանի որ, ինչպէս Պ Սամուէլ Բալաղեանն է ասում, դրանց փոխարինող լաւ միջոցներ դեռ չեն գտնված. թէ սա ո՞րքան ճշմարիտ է, այդ յետոյ կը տեսնե՞ք:

Հիմա մէջ բերեմ Թաւրիզի պէս խուլ անկրկնում գոյութիւն ունեցող

երկուսն դպրոցների մէջ գործադրող մանկավարժական մի այլ սխտէմ, որը շատ դպրոցներում ընդունված ուղղութեան հակադասակերն է. այս հակադասակերը մեր խորին համոզ-մունքով համեմատաբար աւելի ար-դիւնքներ է տալիս, քան ուրիշ տե-ղերում ընդունուած ձեւը:

1898—99 ուսումնական տարում Թաւրիզի Լիլաւա թաղի «Հայկազ-եան» եւ «Թամարեան» երկուսն զբա-րոցների հոգաբարձութիւնը ինձ հրա-ւերեց տեսչական պաշտօն յանձն առ-նել եւ ուսուցչական խումբ կազմել. հրաւերը ընդունեցի: Ահա երրորդ ուսումնական տարին է, որ քիչ փո-փոխութիւններով միեւնոյն խումբը գործում է. հէնց առաջի տարւանից մանկավարժական ժողովը վերացրեց քննութիւնները, աշակերտ-աշակեր-տուհիներին թւանշաններ յայտնելու կարգ ու կանոնը ոչնչացրեց. սրանով վերացաւ նոյնպէս թւանշաններով վկայագրեր տալու սովորութիւնը,

թէ՛ դասարանից դասարան անցնելու եւ թէ՛ աւարտման վկայագրերի հա-մար. առաջինի մէջ նշանանակված է լինում «վոխալարյուլեմ ե», թէ «մնուլ ե» (ծանօթութեան մէջ նշանակւած է լինում «մնում է») առհասարակ թոյլ. կամ այս եւ այն առարկայից թոյլ լի-նելու պատճառով. երկրորդի այսինքն աւարտման վկայագրի մէջ նշանակվում միմիայն սովորած առարկաները:

Աշակերտ-աշակերտուհիների գի-տութեան չափը իմանալու համար ըն-դունել ենք երեք աստիճան (լաւ, բա-ւարար եւ թոյլ). այս չափը տարե-կան երկու անգամ (Ա. եւ Բ. կիսամ-եակ) է գրվում եւ պահվում է առան-ձին մատենանով (կրկնում ենք, այս չափը երբէք չէ յայտնվում, չէ ասվում աշակերտ-աշակերտուհիներին). նախ որ դրա համաձայն՝ տարեկան աշխա-տանքով փոխադրութիւնները կա-տարուեն. երկրորդ, զա դպրոցի յա-ռաջադիմութեան ստատիստիկայի մի մասն է կազմում, որով կարելի է ի-

մանալ, թէ գործադրող մանկավար-ժական սխտէմը տարիների ընթաց-քում ի՞նչ ազդեցութիւն է ունեցել փոխադրողների քանակութեան կամ սովորների վրայ. թէ եւ այս դէպքում դեր են խաղում նաեւ ընտանեկան ու հասարակական շատ բարդ պայ-մաններ եւս:

Այս եւ այն առարկայից թոյլ լինող աշակերտ-աշակերտուհիներին կամ ի-րանք դասատուներն են համոզում, ուշադրութիւն դարձնում, որ աշ-խատեն, եւ կամ դասախոսակներն ու տեսուչը. եթէ կարիք է զգացվում ծնողներն ու խնամակալները կան-չվում են դպրոց. նրանց յայտնվում է իրանց զուակների կամ որդեգիր-ների թուլութեան մասին, խորհուրդ-ներ տալով՝ առաջարկվում է ուշա-դրութիւն դարձնելու:

Տիգրան Ռաշվանեան

(Եւրոպական)

հայերու հետ, կովկասեան լիազօր- ներու ցանկութիւնն էր այդ շար- ժումն ալ հայերու վզին փաթթելու եւ նոր նոր ճնշումներ ընել. ուստի ա- նոնցմէ մէկը կատարած բացազանչեց «չանորդի», հայ մը անգամ չը գտանք»:

Բանուորներու մէջ վառ է հայրե- նիքի սէրը, երկիրը իր բնական վի- ճակը որ գտնէ, օտարութեան մէջ միացող չեն, այնքան զգուած են պանդխտի կեանքէն:

(Ճարտնակէշի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գրիգոր Արծրունիի մահուան ութերորդ տարեգարծի առիթով, «Մշակոյի խմբագրութիւնը զեկ- տեմբեր 19ին հոգեհանգիստ կա- տարել տուեր է հանգուցեալին գերեզմանին վրայ:

— Դեկտեմբեր 9ին Պետեր- բուրգի մէջ տեղի ունեցեր է հայոց սովորական երեկոյթը՝ յօ- գուտ հայ շքատու ուսանողներու: Երեկոյթին մասնակցեր են կայ- սերական թատրոնի օգերայի քանի մը երգիչներ եւ 4—5 հատ գլխաւոր հայ շուքակահարներ: Խումբը երգեր է քանի մը հայե- րէն երգեր. ինչպէս «Ձէյթուն»ի եւ «Սասուն»ի մարչերը, «Կիլի- կիա» եւ «Հայ մեռնիւնք» երգերը, որոնք բուն ծափահարութիւն- ներու արժանացեր են:

Երեկոյթը շատ յաջող է ան- ցեր:

— Դեկտեմբեր 17ին, կերակի օր, Թիֆլիզի ժողովարանին մէջ տեղի ունեցեր է Թիֆլիզի Հա- յուհեաց Բարեգործական ընկե- ռութեան պարահանդէսը: Դահ- լիճին զանազան կողմերը շին- ուած են եղեր շքեղ ու գեղեցիկ վաճառանոցներ՝ զարդարուած ելեքտրական լոյսի գոյնզգոյն բաժակներով:

Շատ մեծ բազմութիւն մը ներ- յայ գտնուած է:

— Աղքատիկ ուսանողներուն յգնելու համար մտադրութիւն կայ եղեր Թիֆլիսի մէջ հիմնել յատուկ ընկերութիւն մը որուն ծրագիրը մշակուած վերջնակա- նապէս խմբագրուած է եւ շուտով պիտի ներկայացուի բարձրագոյն իշխանութեան: Բարձրագոյն իշ- խանութիւնն ալ համակրութեամբ կը նայի եղեր ասանկ ընկերու- թիւն մը հիմնելու գաղափարին վրայ:

Որոշ յայտնի չէ թէ այս ընկե- ռութիւնը հայերու հողմէ մի- այն պիտի կազմուի՝ թէ Ռուս են ալ մասնակցութիւն պիտի ու- նենան:

— Գամառ-Քաթիպայի մա- հարձանին համար կատարուած հանգանակութեան գումարը հա- սած է՝ 2421 եւ 81 կոպ.:

— 1902 թուականին Մոսկուայի Լազարեան ճեմարանին մասնա-

գիտական գասարաններուն գո- յութեան երեսնամակը կը լրա- նայ եղեր: Այս առթիւ ճեմա- րանի վարչութիւնը կը պատրաս- տէ յիշեալ գտարաններուն 30 տարուան պատմութիւնը, որուն համար գիմեր է այդ գասարան- ներու շրջանը աւարտող անձե- րուն տեղեկութիւններ առնելուն համար:

— Իզմիրի «Աղգային Արեւել- եան Ակումբը» որ 20 տարի է ի վեր հաստատուած ընկերութիւն մըն էր, այս օրերս փակուեր, գոյքերը աճուրդով վաճառուեր, պարտքերը վճարուեր եւ մնացեալ գրամը տեղւոյն աղգային հիւան- դանոցին յատկացուեր է: Քսան- ամնայ կարեւոր հաստատութեան մը այս փակումը պատիւ չի բե- րեր Իզմիրի աղգայիններուն:

— Մարկոս Աղաբեգեան կրօ- նական ժողովէն կրօնական շա- բաթաթիւթ մը հիմնելու արտօ- նութիւն խնդրած ըլլալով, ժո- ղովը որոշեր է յառաջիկայ նիս- տին մէջ նկատի առնել այդ խըն- դիրը:

— Տեղւոյս Որբախնամի գործա- դիր վարչութիւնը իր հրապարակա- յին շնորհակալիքը կը յայտնէ Պալ- չքի ազնիւ ազգայնաց, որոնք Ս. Գրեգորեան տօնի առթիւ իրենց մէջ 31.50 ֆր. հաւաքելով Որբախնամի զրկած են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պեղծիգայի արքայական զօրա- գունտին նախկին սպաներէն Լօ- պէլ, որ բախտախնդրութեան համար Թուրքիա եկած եւ յաջո- ղած էր կայսերական թիկնա- պահներուն մէջ մտնել ու փայ- լուն գիրք մը շինել Հասան ճէ- միլ փաշա անունով, քանի մը օր առաջ մեռեր է:

— Քասապայի երկաթուղիներ- ռու գործաւոր մը իզմիրի մէջ ժանտախտէ մեռեր է: Խիստ մի- ջոցներ ձեռք առնուեր են հի- ւանդութեան ծաւալումին ա- ռաջքն առնելու համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Գեսպանները տուգանքի խնդ- րին վրայ վիճաբանելով այն եղ- րակացութեան հասեր են թէ՛ տուգանքի աճող քանակու- թիւնը պէտք է որոշուի եւ ամէն մէկ տէրութիւն մաս մը ստանայ անկէ: Կը յուսան թէ Չինաստան առանց մեծ դժուարութեան կրնայ չորս միլիոն անգլ. ոսկի տուգանք մը փոխառու- թեամբ հատուցանելու համար:

— Գեսպանական մարմինը իր վերջին գումարումին մէջ ամբաս- տանագիր մը կարգացրեր է իշ- խաններու եւ պաշտօնեաներու ա- րարքները պատմող, Բայց չի- նացիր այդ ամբաստանագրին

պատճէնը հայթայթած եւ եւրո- պական տէրութեանց մէջ պա- տիժներու մասին տիրող կար- ծիքներու անհամաձայնութիւնը կռահած ըլլալով, խնամքով պա- տասխան մը պատրաստած էին, եւ մահուան վճիռներուն դէմ յա- ջողած են միշտ խուսափողական ճամբաներ գտնել, այնպէս որ գեսպանական մարմինն ժողովը ոչ մէկ հետեւանք կրցած է ու- նենալ:

— «Նիւ-Եօրք Հերալտ» կըսէ թէ՛ Լիհուսկ Չանկ ժողովին մէջ կարգացրեր է կայսեր մէկ հեռա- գիրը, ուր տէրութիւններէն կը խնդրէ չի պահանջել ինչ որ Ջի- նաստանի կարողութիւններէն վեր է:

Փոխարքան յայտնէր է թէ կայսրը զինքը կարտօնէ մահուան պատիժը ընդունել բացի Թուան իշխանէն եւ Տիւրք Լանէն. որոնք աստիճանագրով պիտի ըլլան եւ պիտի աքսորուին:

Ռուսաց, Յրանսայի, Մ. Նա- հանգներու գեսպանները ընդու- ներ են այս առաջարկը:

— Սի Հունկ Թուէն եկած լու- բերուն նայելով Դանսի մէջ տիրող սովը Չինաստանի պատ- մութեան մէջ նմանը չէ ունե- ցած: Բանակչութեան 2/3ը ու- տելիքէ զուրկ է. սաստիկ ցուրտ մը սովին պատճառած թշուա- ռութիւնը աւելի կը շեշտէ. վա- ռելանիւթը կը պակսի: Նինկ իշխանը յայտնէր է գեսպաննե- ռուն թէ՛ ժողովուրդը մարդկա- յին միտով անանելու եւ կրնորն ու տղաքը ծախելու հարկին մէջ կը գտնուի: Կառավարութիւնը ամէն ջանք պիտի ժողովրդին թշուառութիւնը ամօքելու հա- մար, բայց չի յաջողիր:

— Պրանսական եւ Գերմանա- կան զօրագունդ մը ձերբակալեր է ամերիկացի միսիօնար մը եւ երկու անգլիացիներ որոնք կամ- բաստանուին Շու Չէուի շրջակայ- քէն 80,000 թայէլ կողպտող տեղացի քրիստոնեաներու գլու- խը անցած ըլլալուն համար: Երկու անգլիացիները ազատ ար- ձակուեր են, իսկ ամերիկեան գեսպանը Պրանս. եւ Գերմ. գես- պաններուն դիմումը բրած է իր արձակումը պահանջելու համար:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Վար Օֆֆիսը կը ծանուցանէ 30,000 զօրաց հարաւ. Ափրիկէ առաքումը, եւ սակայն Պօէրնե- ռու արշաւանքը դէպի Քար Կեռ կը շարունակուի: Պօթա 2000 մարդերով եւ 7 թնդանօթներով Քար անցեր է:

Լօրէնցօ մարքեզէն 33 մլոն հեռու Տէլակուայի երկաթուղոյն գիծը պօէրներու կողմէն կտրու- ուեր է:

Ութը խտէն կը գրեն թէ՛ փեռ.

ճին նախագահ Քլիւկէրի աջաչ- քին վրայ ալ գործողութիւն կա- տարուեր է յաջողապէս:

— Կըսուի թէ պօէրները զըն- դապէս Պլէքի առաջնորդու- թեամբ Լօրէնցօ մարքեզի կը սպանան, եւ փորթուկալի կա- ռավարութիւնը անգլ. զօրքերու օգնութեան դիմեր է յարձակող- ները վանելու համար: Հարաւա- յին Ափրիկէի անգլ. նաւատոր- միչը հրաման ստացեր է Լօրէն, ցօմարքէզ մտնել:

— Մալթաէն կը հեռագրեն թէ «Փիրամիւս» մարտանուր հրաման ստացեր է Ափրիկէ մտնել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

«Նայէ Պրայէ Բրէսէ» հիւստա- րակած է նախարարապետ Բէթ- րօֆի մէկ տեսակցութիւնը պուլ- կար եւ ուռմէն վէճին առթիւ: Նախարարապետը կը յանդիմանէ Ռուսմանին, գատին տեսնուելէն առաջ Մակեդոնական կօմիտէին լուծումը պուլկար կառավարու- թեանէն պահանջած ըլլալուն հա- մար: Այդ կօմիտէն օրինաւորա- պէս գոյութիւն ունի եւ կը պաշտ- պանէ Մակեդոնիոյ հարստահար- ուած պուլկարներուն դատը:

Բէթրով ցաւ կը յայտնէ Մա- կեդոնիոյ վիճակին վրայ, ուր խոստացուած բարենորոգումները չեն զործադրուած եւ ուր պուլ- կարներու գրութիւնը անտանելի է: «Ասկէ զատ, ըսեր է Բէթրով, պուլկար կառավարութիւնը եր- բեք չէ հովանաւորած այդ Լօ- միթէն որ իմ խոստութիւնս բա- ւական կը ճանչնայ. իր գործու- նէութեան մէջ արտօնեալ սահ- մաններէն անդին չանցնելու հա- մար»:

Ա Ն Գ Ի Ի Ա

«Ուրուական» յածաւորակը հրաման ստացեր է ծով իջնել զազտնի հրահանգով, կը կար- ծուի թէ Ափրիկէի ծովեղբո- ները պիտի զրկուին կամպիայի մէջ ծագած խռովութիւնները զսպելու համար:

— Քարտիֆի մէջ ատաղձա- գործի ծառայ մը ժանտախտէ մեռեր է, ուրիշ կասկածելի նշաններ ցոյց տուող հիւանդներ հսկողութեան տակ առնուեր են:

Քաղաքիս մէջ թուրքի չգոյու- թեան պատճառաւ, ստիպուեցանք փոխել թուրքի չափը ստանց սա- կայն պարունակութեանէն զեղջե- լու:

Отговорникъ:
Д-ръ МХГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.

